24. ԻՐԵՔ ԲՈՒՌ ՀՈՂ

Ժամանակով թագավոր մը կէղնի, ինք, ուր լալեն դավրեշ ղլըղի զվռնելու գելլան։ Ճամփու հետ էրթըլու վախտը կտեսնան էրեխեք հողի հետ կխաղան։ Թագավորը վերցուց ըսավ թե.

— Լալա, ես մազմ էղնեինք, էս էրեխաց օտաց տակը մազ բուսենք. աշխարքից խաբար չունին էդ էրեխեք։

Լալեն ըսավ թագավորին թե.— Փորձ առ հետո էդ խոսքը ըսե, կարելի է շատ մեղավոր են։

Թագավոր լէ վըր լալին չարացավ, ինատ էրեց վըր լալին ու դնաց էրեխոնց մոտեն փորձ առավ, օր տեսնի էդ էրեխեք հաստատ մեղավո՞ր են։

Գնաց թագավոր փորձ էրեց, էրեխեքը իրեք տեղով հող ին քոմած. թագավոր գնաց ոտք զարկեց օր ըլուցեր։ Էրեխեն վերուց թագավորին ըսեց.

— Է՛յ, ի՞նչ կէնիս, իմ տուն հ՛որի՞ կբլուս։

Ըսեց.— Էդ ի՞նչ է դու կէնիս։

Էրեխեն վերցուց ըսեց.— Դու ճամփորթ ես, քու ճամփու հետ գնա՛, ի՞նչ քու հաշիվն է։

Ըսեց.— Չէ, պըտի փորձ առնիմ։

Էրեխեն ըսեց, թե.— Տուր տաս օսկի, օր ըսիմ քըզի, թե ի՞նչ կէնիմ։

17—1086

Առավ տաս օսկին էրեխեն, ըսավ թե.— էս հողը էն մարդու գլխուն էղնի, օր հին բարեկամը կթողե ու թազեն կբռնե։

Դարձավ մեկել հողին, տաս օսկի լէ ընդրան առավ, ըսավ.

— Իտա հող լէ էն մարդու գլխուն էղնի, օր կնկա խոսքով նըստի ու կկանի։

Դարձավ մեկել հողին, տաս օսկի լէ ընդրան առավ, ըսեց.

— էս հող լէ էն մարդու գլխուն էղնի, օր իրիկվա գործը լուսուն կթողե։

Թագավոր առավ ուր լալեն, էկավ տուն։ Թագավոր տասվերկու թիկնապահ ուներ, վեց թալեց, վեց թաժա բռնեց, էն էրեխանց ինատ էրեց։

Թագավորին մե լավ ղոչ մը կար։ Թագավոր ուր սեր թալեր էր վըր էդ ղոչուն. աշխար ձեռաց գներ, անկաճ չէներ, սեր ղոչու վըրա էր։ Լալեն գողցավ զէդ ղոչ, տարավ պահեց։ Լալեն ուր կնկան չասեց, թե ղոչ գողցեր, պահեր է։ Զարսուից գնաց ղոչ մը գնեց ու բերեց լալեն, ըսեց.

— Կնի՛կ, իդա էն ղոչ է օր թագավոր ուր սեր թալեր էր վըր իդա ղոչուն։

Բերեցին էդ ղոչ մորթեցին, կերան։ Միսն օր խլսավ, էդ մարդ մահանա քաշեց օր կնիկ ծեծեր, մահանեն գտավ ու ծեծեց։ Կընիկ հ՝ելավ տանիք բռռաց թե. «Թագավորի ազիզ ղոչ ուր լալեն բերեց մորթեց ու կերավ, հիմա լէ զիս կսպանե»։ Շուտ մը խաբար գնաց թագավորին։ Թագավոր ճամփըցուց էրկու մարդ, զլալեն բռնեցին ու տարան։ Տարան օր գլուխ զարկեն, էրկու ջալաթ էկան ամեն դեմը կանավ օր զարկեն էդ մարդու գլուխ։ էդ հին վեց թիկնապահը ըսեցին թե.

— Թագավո՛ր, փորձ առ, նոր զարկ գլուխ, չըլլի մեխկ ընկնա մեր վիզ։

էն վեց թազա թիկնապահ, ընղոնք լէ կըսին.

— Մը՛ հարցու, զարկ, ըսպանե։

Լալեն խնդրվավ թագավորից, թե.— Թագավորի խազինեն, փարեն շատ է, թագավորի խոսք մեկ է, էրկուս չէղի, էն էրեխանց չէ՞ դու եռսուն օսկի տվեցիր, կխնդրիմ ընձի իգին տաս խոսք մը ըսելու։

Թագավորը ըսեց.— Իզին է։

Լալեն ըսեց.— Քու ղոչ պահեր իմ, էրեխանց խոսքն եմ ես փորձի, քու ղոչ տուն է, հանդե էրթամ ու բերիմ։— Թողեց գնաց ու առավ էկավ։ — Տեսնաս,— ըսավ լալեն,— էդ իմ կնիկն է, պահող

ես ենք, մեկ փետի ապով օր զարկեցի. Հելավ զիս կիտեր ըսպանել։

Խոսք կատարավ լալին, լալեն ազատվավ. էն վեց հին թիկնապահ, ընդոնք լէ ազատվան, էն վեց թաժեն ըսպանվան։

Վերցուց թագավոր էրկու օսկի տվեց լալին, ըսեց.

— Լալա՛, տեսնա՞ս իտա օսկիք։

Ըսեց.—Հա՛, կտեսնամ։

Թագավորն ըսեց.— Իմ խազինայի մեջ իդա օսկու չեշիտ էլ չկա։ Առ զէրկու օսկին։ — Առավ լալեն.— Կէրթաս ընձի ղոչ մե թագավորի լայեղ, քյապապ մե թագավորի լայեղ, էդ ղոչու մսից պըտի էղնի, սիճատան (աղոթքի ղորդ) էդ ղոչու բրդից պրտի էղնի։ էն էրկու օսկով պրտի առուտուր էնիս, ուրիշ փարա չըպրտի խաղա մեջ։ Գուզիմ ղէրկու օսկին, գուզիմ ղոչ, գուզիմ քյապապ ու սիճատեն. իգա հ՝ըմեն կառնիս հետղի կիգաս։ Ուրիշ փարայով օր լսիմ առեր իս, գլուխդ ի կղարկիմ։

Լալեն առավ էրկու օսկին, դնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, ավուր մեկի քաղքի ռաստ էկավ, չգինա թե որ քաղաքն է։ Ջարսուի (ջուկա) մեջտեղով կէրթեր, բիրդան աչք փրծավ փանջարեն, սուրիաթ մի տեսավ, աչկեց ու կաչկեր սուրիաթ։

Սուրիաթ ըսեց. «Գլոխսի քաջիմ, էդ մարդուն մեղք կմնա վիզս ի»։ Լալեն լէ մոռցավ զթագավորի ասած խոսք, ճարահատ էղավ սուրիաթ ու ձեռքով խանչեց վերև։ Հ՝ելավ վերև լալեն։ էդ ախչիկ լէ հ՝ըրնղար (կախարդ) էր։

Լալեն ըսեց թե.— Արի մոտս ի։

Ախչիկ լէ, վերցուց ըսեց թե.— Պապե, արի նստի։

Քանի լալեն ըսեց. «Արի իմ մոտ», էն ախչիկ լէ ըսեց. «Պապե, արի նստի»։

Ախչիկ ըսեց.— Քու դարդ լէ ընձի ըսե։

Ըսեց.— Ինձի դարդ չկա։

Ըսեց.— Կա՛, կա՛։

Ճարահատ էղավ ու ըսեց լալեն։ Ըսեց.— Էս էրկու օսկին կտեսնա՞ս, թագավոր դրեր է իմ վրեն, ղոչ մը կուզե, էդ ղոչու մսից քյապապ կուզե, էդ ղոչու բրդից սիճատեմ կուզե, ղէրկու օսկին լէ ետ կուզե, ուրիշ փարայով պրտի առուտուր չէղնի։

— Դու նստի իտա տեխ, պապե, տուր ընձի ղէրկու օսկի։

Առավ ախչիկը ղէրկու օսկին ու դնաց։ Գնաց թուզրի մը մոտ, ըսեց.

— Տեսնա՞ս ղէրկու օսկին, ինչ անթիքա օսկի է։

Թուշար առավ աչկեց, տեսավ, որ օսկիքը անթիքա էր։

Ըսեց.— Ի՞նչ գուզիս էրկու օսկուն օր տաս ընձի։

Ըսեց.— Թուշար բաշի, էն քու ֆիլան ղոչ տաս ընձի։

Առավ ղոչ էկավ։ Ճամփցուց հովիվ բերեց ախչիկն ի, տվեց կընտել ղղոչ, տվեց կոտել լէ, ընտրա փլորներ հանեց, ընտրա փլորներ թարպիա ըրեց (չինեց), լավ քյապապ շիքեց, թագավորի լայեղ քյապապ հանեց, էն ղոչու մսեն էղավ հէ՞, ղոչ լէ սաղ է։ Բուրդը մանեց իրեք սիճատա շիքեց, էրկուսը աղեկն, մեկը վատ։

Ախչիկը ըսեց.— Պապե, քյապապն էղա՞վ, ղոչն էղա՞վ, սիճատեն լէ էղավ, մնաց էրկու օսկին, ըդրա ճարն իմա՞լ պըտի էնի՞նք։

Ախչիկը վերցուց էն վատ սիճատեն տարավ էլման թուշրին։

— Տեսնա՞ս,— ըսեց,— էս սիճատեն։

Ըսեց.— Հա՛, կտեսնամ։

— Որ մեկ օր մուսուլման է, իտա սիճատի վրեն օր նամազ չէնե, էնի մուսուլման չէ։ Թագավոր, ընդրա տունը օր իտա սիճատից չէղնի, շայան չէ լըմեժ էնել (արժան չէ աղոթք անել)։

Թուշար ըսեց ախչկան.— Ըդրա գին ի՞նչ է, քանի հազար օսկի է, ուզե՝ տամ։

Ըսավ թե.— էն իմ տված էրկու օսկին է։

Առավ զէդ էրկու օսկին, ու բերեց ըսեց լալին.

— Պապե, իտա քու ըսած ղո՞չն է, իտա լէ քու ըսած քյապա՞պն է, իտա լէ քու ըսած սիճատե՞ն է, իտա լէ քու էրկու օսկին։ Իտա մեկ սիճատեն էլ հ'եվելի տվի քըզի։

Լալեն առավ, տարավ թագավորին տվեց։

Թագավոր ըսեց.— Լալա, ըդրա շիքող ընձի ցուց տուր։

Ըսեց.— Հեռուն է։

Ըսեց.— Պըտի էրթանք գտնանք։

Լալեն ու թագավոր դավրեշ ղըլըղի հ'ելան ու գացին։ Շատ ու քիչ գացին, էդ քաղքի հ'տռեջ կանան։ Ջուր մը կընցներ քաղքի հ'առջևով։ Տեսավ էրկու մարդ էն դեհեն էկան։ Հարցուց էդ մարդոց մոտեն էդ թագավոր թե.

— Դու ի՞նչ մարդ եք։

Մեկն ըսեց.— Ես թուշար իմ։

Մեկն ըսեց.— Ես հ'ըռընջպար իմ։

Թագավոր ըսեց թե.— Թուշար պաշի, կէղնի օր իդա ջրի վըրեն կարմունջ մը կապիս, հ'ընցընանք։

Թուշար պաշին (վաճառականապետ) ըսեց.

— Իտագահ կարմունջ իմա՞լ կապիմ։

Զիմացավ զթագավորի խոսք թուշար պաշին։ Բոբկրցան, չորս մեկտեղ զարկին հ՚ընցան։ Դուրան ճամփա կիգեն, թագավորն ըսեց.

— Թուշար պաշի, նարդիվան մե շիքե օր էրթանք գեղ։

Թուշար էլման չհասկցավ։ Էկան գեղի մեջ։

Թուշարն ըսեց թե.— Դավրեշ, ձզի բարեկամ կա՞, ըդտեղ, էրթաք մըսաֆըր էղնիք։

Ըսեց.— Չկա՛։

Թուշար ըսեց.— Դե, արի էրթանք մըր տուն։

Գացին ի տուն։ Նստան։ Տեսան օր տուն խորոտիկ տուն էր։ Լալեն ըսեց թագավորին թե.

— Իտա էն տուն է, օր ախչիկ էդ ղոչ, էդ քյապապ, սիճատեն շիքեց։

Թուշար ըսեց տանդիեն թե. «Մե ղաֆա շիքեք, բերեք էս մըսաֆուրների համար»։

Էդ ախչիկ շիքեց, առավ ու էկավ։ Թագավորի աչք առավ ախչիկ։ Ախչկան նման չկեր խորոտիկ։

Ըսեց թագավոր թե.— Քու տուն խորոտ տուն է, ֆախատ մեկ փանճարեն օզոր (ծուռ) է։

Թուշար պաշին հերսոտավ վըր թագավորին, բայց չըգինա, թե թագավոր է, դինա, թե դավրեշ է։

Թագավորը խոսք մը լէ ըսեց թուշըրին թե.

— Քու ախչիկ չիտա՞ս ընձի։

Հերսոտավ թուշար, դուռը զարկեց գնաց հարեմ օդասըն (կանանոցը), ըսեց.

— Կնի՛կ, ես ճամփու հետ էկա, ֆիլան ջաղջի ջրին էրկու դավրեշ նստուկ ին, էդ գահ կարմունջ ուզեցին կապե, հըլա ըսի.. զարկ հ՚ընցընանք, հ՚ընցանք ջրի զատեն, ու դուրան ճամփախ կիգենք։ Հ՚իսնե (ինձնից) նարդիվան լէ ուզեց։ Էկանք գեղի մեջ, հարցուցի էդ մարդոց մոտեն, թե բարեկամ չկա՞ ձըզի, ըսեց՝ «Չկա»։ Ես լէ բերեցի մեր տուն մըսաֆուր։ Հըմկա լէ կըսի. «Ձեր փանջարեն օզոր է». Էրկու հարիր հիսուն ղուրուշ ես տվեր իմ, մհանդես (ճարտարապետին) բերեր իմ վըր իմ շինութան, մկա լէ կըսե. «Փանջարեն օզոր է»։ Իտագահ լէ կասէ. «Ախչիկդ տու ընձի»։

Կնիկ պատվիրեց ուր մարդուն.— Գնա ծեծե էրկու դավրեշ, դուս էրե իդա գիշերով։

Թուշար ձեռ թալեց, դուռ բացեց օր էրթեր, զէդ էրկու դավ-բեշ դուս էներ։ Բայց չի գինեն, թե թագավորն էր, ուր լալեն էր։ Ախչիկ դիներ, ոբմտար էր։ Ախչիկ ձեռ թալեց, պապու ձեռ բռնեց, ըսեց.

— Հէ՜, հայրիկս, դեռ՞ր կէրթաս, զէդ մարդիկ դուա կէնիս, հապա մէրթա։

— Էդ մարդիկ ո՞րն է.— հարցուց թուշար։

Ախչիկը ըսեց.— Թագավորն է, էն լէ լալեն է,— ըսեց,— էն դախ օր էկաք ջրի վրեն, քեզնե կարմունջ չէր օր ուզեց, հրպը՝ շալկե հ՚ընցու, դու չֆահմեր իս։ Դուրան ճամփան՝ նարդիվան քըզնե ուզեց, ընի նարդիվան չէր ուզեր, հրպը՝ մրժուլիմ (հեքիաթ) էնի՝ էրթանք, դու գիտցեր ես, թե նարդիվան է։ Տընեն ըսեց՝ «խորոտ է», էնի ես ենք,— ըտի ախչիկն է կպատմե,— փանշարեն օզոր է,— ըսեց,— ըդի իմ աչից ախպուրը կխաղա, ըդոր հմա ըսեց, թե փանշարեն օզոր է։ Էն վախտն օր ըսեց՝ «Ախչիկդ ի կիտա՞ս ընձի», էն վախտը դու պըտի ըսէիր տնեն չհարցուցեր ենք, կամ ախչկա, կամ ախչկա մամուց, օր ես խոսք տենք, ընդոնք օր չառնին, ընձիկ համար սև երսանք էր։ Գնա ըսե մկա հարցուցի։

Թուշար էկավ ըսավ թե, փորձ առա ես, ախչիկը կառնե, մամ լէ կիտա։

Թագավորը ըսեց.— Խալան (բաշլըղ) ուզե օր տամ։

Թուշարն ըսեց թե.— Մեր խալան ախչիկ կկտրե։

Թագավորն հ՚ելավ, լալեն ճամփցուց օր խալան կտրեր, գընաց ըսեց թե.— Ախչի, քու խալան դու ըսե։

Ըսեց.— Իմ խալան տասնվեց շիշակ (մի տարեկան մաքի) է, քսան հատ ղոչ է, վաթսուն ախըլ (խելք) է, յոթանասուն լէ ֆարասաթ (անշնորհք) է։

Լալեն էկավ թագավորին ըսեց թե.— Խալան քիչ բան մը ուզեց։ Ես կունենք իմ ջեբեն տանք, էկա քըզնե կհարցում։

Ըսեց.— Ի՞նչ է խալան։

Ըսեց.— Տասնվեց շիշակ, քսան հատ ղոչ, վաթսուն խելք, յոթանասուն ֆարասաթ։

Թագավորն ըսեց.— Նեա, ես կունամ տամ էդ խալան, նեա դու կունաս տաս. ոչ մեկ լէ չի կունա տա, միակ աստված կիտա։ Հըմա լէ տասնվեց շիշակ օր ուզեց, ախչիկ տասնվեց տարեկան է, քըսան ղոչ ուզեց, քսան տարեկան տղա կուզե։ Վաթսուն խելք ու-

զեց, հրմա լէ ես վաթսուն տարեկան եմ։ Խելք կորցուցեր իմ, օր
յոթանասուն լէ էղա, ֆարասաթ կկորցում։ Գնա՛ ըսե, էնի իմ ախ-
չիկն է, էլ ընձի պետք չէ։

Ա՛օլդի, հարա օլդի, գյորդըղըմ դեղ-ըղմըզ ըշտե բեյլադր։